ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1910-Ա « 13 » ապրիլի 2026թ.

ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ ԵՎ ՔՈՉԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՏՄԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 20.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հայկ Պետրոսյանի լիազորված անձ Ազատ Պետրոսյանի դիմումը՝ Գայի պողոտայի և Քոչարյան փողոցի հատման մասում գտնվող 20.0քմ մակերեսով տարածքի համար Հայկ Պետրոսյանի հետ 06.08.2004 թվականին կնքված Հ.361/6-ՊՓ հողի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով.

1.Լիազորել Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայկ Պետրոսյանի հետ կնքել համաձայնագիր՝ Գայի պողոտայի և Քոչարյան փողոցի հատման մասում գտնվող 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

2. Ընդունել ի գիտություն, որ վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրից ծագող իրավունքի դադարումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ